


ՇԱԲԱՐԱԹԵՐԹ
ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԵՒ ՉԱԻԵՇՏԱԿԱՆ



ՊԱՅՄԱՆ
ԳՐԱԳՐԱՆԵՐ
ԵՏ ՁԵՆՏՐՈՒՄ
ՃԱՆՈՒԹՅԱՆ
ՍԱՆՆԱԿ
ՊԱՅՄԱՆԵՐԸ
Հասցե
DIRAN
PAPAZIAN
Alexandrie
Egypte
Թիւրք. 1 2րդ ուղ.

ՊԱՏԿԵՐՆԵՐ

ԿԵՂԾ ԳՐԱԳԻՏԸ

Կեղծ գրագէտը գրելու արուեստը միայն սորված է, ֆրանսերէն գիտէ, քիչ շատ ծանօթ է ֆրանսական գրականութեան: Սկզբունք և նպատակ չունի: Հաւատարիմ հետևողի մը պէս կը կոխէ միայն հոն ուր որ իր առաջնորդը կը կոխէ: Կը գրէ առանց բան մը ուսումնասիրելու անձնապէս և առանց որոշ ընելիք մը ունենալու: Բառ չը փնտռեր իր միտքը բացատրելու համար. —այդ կողմէն առատ պաշար ունի—, այլ նիւթ կը փնտռէ իր բառերը կամ «հմտութիւնը» ցոյց տալու համար: Շողջուրուն բառերը շատ կը սիրէ, և կանոնք կը ղետեղէ իր գրութեանց մէջ առանց անհրաժեշտ պէտք մը ունենալու անոնց անճշակաբար, ինչպէս խանութպան մը որ կը շարէ սոխին ու սխտորին քով սեխն ու խաղողը, երկարաբան է, և որքան չնչին ըլլայ նիւթը, միշտ ընդարձակ է իր գրութիւնը լի անիմաստ նախադասութիւններով, աւելորդ բառերով և տըղայական բացատրութիւններով: Իր գրուածքը կը նմանի տունի մը ուր առ ի չգոյ՛ է պիտանի կարասեաց ղետեղուած են խել մը բանի չծառայող անպէտ կտրասիներ ծածկելու համար միջոցին պարապութիւնը: Ինքզինքը հանճար մը կը կարծէ, բայց դատողութեամբ այնքան տըղար է որ մինչեւ չկարգայ ստորագրութիւնը չկրնար դատել պարունակութիւնը: Եթէ անկարող ըլլայ պատասխանելու մէկու մը, կըսէ,

«Կարեւորութիւն չեմ տար»: Իր հփոքրայն փաստը նախատինքն է, իր արժանիքը իր արհամարհանքին մէջն է:

ՎԱՇԽԱՌՈՒՆ

Արհեստներուն յոռեգոյնը վաշխառութիւնն է: և վաշխառներուն յոռեգոյնը բնութեամբ վաշխառուն է: Եթէ գրամ տայ մէկու մը և անկէ տասնապատիկը գանձէ, միշտ կը կրկնէ, «ես անոր գրամ տուած եմ, բարիք ըրած եմ»: Սուրճ մը չը խմցուներ մինչեւ որ վստահ չըլլայ թէ ճաշ մը պիտի վտայէ փոխարէն: Եթէ մէկու մը գործ տայ, գոհ չըլլար հոգին հանելով, կը նայի որ կաշին ալ հանէ: Այլոց նեղութիւնը իր սերմայէն է: Իր հայեցակէտը ամէն խնդրոյ մէջ սա է, «ասկէց ի՞նչ կրնամ շահիլ»: Արարածներու էն զգուելին է: ու միշտ պարկեշտ և պատուաւոր մալ գու անունովը ծանօթ է:

ԱՆՉՆԱՍԻՐ ԿԻՆԸ

Անձնասէր կնոջ սրտի ու մտքին աշխարհին մէջ ուրիշ բնակիչ չկայ բացի իր էրիկէն ու զաւակէն: Եթէ աշխարհ կործանի, ան կը հարցունէ.

- Էրիկս ի՞նչ եղաւ, զաւակս ո՞ւր է:
- Ամուսինդ ողջ է տիկին, զաւակդ հոս է, բայց բոլոր մնացեալները կորսուած ու մեռած են.
- Փա՛ռք քեզ Աստուած.

ՋԱՐԴԱՄՈՂ

Ջարդամոլը ամէն բանի մէջ միայն մէկ հայեցակէտ մը ունի, — զարդարուն՝ «սիւսլիւ» է: Լաւագոյն բանը այն է որ ամենէն աւելի զարդարուն՝ «սիւսլիւ» է: Լաւագոյն գրուածքը այն է որ ամենէն գեղեցիկ բառերով շարադրուած՝ «սիւսլիւ» է: Լաւագոյն մարդը ան է որ ամենէն շիք հագուած՝ «սիւսլիւ» է: Եթէ դատաւոր ըլլար, իրաւունքը անոր պիտի տար՝ որ իր ոտխէն աւելի «սիւսլիւ» է: Եւ եթէ երբէք որ մը մահուան դատապարտուի, հաւանօրէն իր միակ մտահոգութիւնը այն ըլլայ թէ արդեօք կախազանը զարդարուն՝ «սիւսլիւ» է:

Ս. ՄՈՒՐԱՏԵԱՆ

ԱՉԳԱՅԻՑ

ՎՍԵՄ. ԱՐԲԱՆԱՄ ԲԱՐԹՈՂ ԲԱՇԱ

Աւրախութեամբ կը ծանուցանենք թէ՛ Պարսից Վեհ. Եանը՝ այս միջոցիս Եգիպտոս գրտնուող իր Մեծ Վէզիրին միջոցաւ Առիւծի և Արեգական առաջին կարգի պատուանշանը շնորհած է ն. Վսեմ. Բարթող Բաշայի:

Եգիպտոսի Պարսկական Ընդհ. Հիւպատոսը երեքշաբթի օրը ն. Վ. Բարթող Բաշային ապարանքը երթալով, իր ձեռքով Բաշային կուրծքէն կախած է յիշեալ պատուանշանը:

Ընդհ. Հիւպատոսի մեկնելէն անմիջապէս վերջը ն. Վ. Բարթող Բաշա փութացած է Սան՝ Սթէֆանօ երթալով, Մեծ Վէզիրին յայտնել իր խօրին շնորհակալիքը:

Երանեան Յոգեղեանը

Բառորդ դար առաջ Վանի մէջ Որբանոց—Վարժարան մը հիմնող աչազուրկ Տ. Համբարձում Երամեանի յորեկեանը կատարելու համար կազմուած Յանձնաժողովոյ կողմէ հանգանակութեան ձեռնարկուած է, որուն արգիւնքը պիտի յատկացուի Երամեան վարժարանին համար նոր շէնք մը գտնելու կամ շինել տալու:

Արդէն Գահիրէի մէջ սոյն հանգանակութեանէն ծօ ոսկիէն աւելի գումար մը գոյացած ըլլալով, վստահ ենք որ տեղույս աղգայինք ալ պիտի փութան յօժարակամ մասնակցիլ այս բարի գործին, քաջալիքելու համար բազմափաստակ ուսուցիչ մը և օգնելու համար հայրենիքի որբուկներուն:

— Իզմիրի ծանօթ ազգայիններէն Աւետիսեան Աւետիս, ճշմարտախօսեան Ստեփան եւ Իւրայէլձան Ռուբէն իրենց անշարժ կալուածոց մէկ քանին տեղւոյն ազգային Հիւանդանոցի վազճ ըրեր են, պայմանաւ որ մինչեւ ցմահ իրենք ստանան անոնց հասոյթներն, և վաճառելու իրաւունք չունենան:

— Ակնայ առաջնորդական տեղապահը Պատրիարքարանէ նպատ խնդրեր է՝ Բինկեանի մէջ հնձոց ու գործոց նուազութեան պատճառաւ կարօտելոց համար:

— Բեգրսպուրկէ հեռալիք մը կը ծանուցանէ թէ՛ Ռուսիոյ կայսեր հրովարտակաւ պաշտօնէ արձակուեր է Տիգրիսի Առաջնորդ Տ. Գէորգ Արքեպիսկոպոս Սուրէնեանց, առանց Ս. Հայրապետին գիտութեան:

— Պոլսոյ Գաւրուչէճէի եկեղեցիէն գողցուեր է Կենաց Փայտի մաս պարունակող արծաթ Խաչ մը, զոր 120 տարի առաջ նուիրած է Չաքարիա Պատրիարք, որուն գերեզմանը կը գտնուի նոյն եկեղեցւոյ մէջ:

Փոնցի մէջ կը կարգանք:

«Եգիպտոսի Հայոց Առաջնորդ Տ. Յովսէփ Եպիսկոպոս՝ Հնդկաստանի մէջ ամուսին ունեցող և Գահիրէի մէջ հաստատեալ կնոջ մը կրկնամուսնութեան հրաման տուեր, և Պապի խորհուրդը կատարուեր է: Տ. Յովսէփ Եպիսկոպոս այս հրամանը տուեր է՝ առանց ո՛ր եւ է քննութեան և առանց Պատրիարքարանի և Էջմիածնի տեղեկազրբու: Հետեւաբար պայթակզութեան տեղի տուած է: Կը յուսամք թէ՛ Պատրիարքարանը բացատրութիւն պիտի պահանջէ:»

Վ Ի Պ Ա Թ Ե Ր Թ

Հրատարակուեցաւ առաջին թիւը հետեւեալ բովանդակութեամբ:

1. Մերժումս Սեր. Պոլսական կեանքի գրուածքներ. գրած է. Պ. Ե. Սրմաքէշխանլեան:
 2. Տըրամներ եւ Կաղնիսի Հաւաստակալութեան, հեղինակութիւն Պ. Պ. Մառիոյի և Լօնէյի:
 3. Խորհրդաւոր դաս Ար. հեղ. Յօրթիւնէ տիւ Պօկոպէի:
- Տարեկան բաժնեգրին է Եգիպտոսի համար 6 ֆր: Դիմել հետեւեալ հասցէին:

Օճնիկ Բարսեղեան
Էմքոխըռի Օրիենթալ, Վառնա (Պոլսի)

Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

Ռուսո-ձաբոնական պատերազմը

Ռուսիոյ և ձաբոնի միջև տակաւին պաշտօնապէս պատերազմ չհրատարակուած, ձաբոնցիները նախապարձակ եղան :

Ամսոյս 8ին եկած հեռագիր մը կը ծանուցանէր թէ ձաբոնական զրահաւորները Ռուսական զրահաւոր մը ընկղմած և երկուք ալ ժանրապէս փաստուած էին, հետեւեալ օրը ուրիշ հեռագիր մը կը հաղորդէր թէ ձաբոնական 15 մարտանաւեր Ռուսական երեք մարտանաւ ուժակոծելով, մին իւրած և միւսները փաստուած են ծանրապէս, իսկ նոյն օրը ձաբոնական զրահաւորները Բորթ Արթուրը ուժակոծած են որուն փոխարինած են Ռուսական մարտկոցները և նաւահանգիստին մէջ Կոնուոզ մարտանաւերը: ձաբոնցիք մէկ ժամ յետոյ ետ քաշուած են բաւական փառանք պատճառելով Ռուսական մարտկոցներուն:

Ռուսական մարտանաւ մը ընկղմած և ուրիշ մըն ալ կրակ առած է:

— Բովանդակ ձաբոնի մէջ պաշարման վիճակ հրատարակուեր է :

— ձաբոնցիները Բորէայի մէկ քանի կէտերուն վրայ զօրք հանել սկսեր են:

— Սէն Բէգրսպուրկի մէջ յուզումը և զայրոյթը մեծ է ձաբոնցիներուն պատերազմի հրատարակումէն առաջ յորձակում գործելուն համար:

— Թուրքո—Պուլկարական պատերազմը մօտալուտ կերեւի, որսվհետեւ երկուստեք մեծ պատրաստութիւնք կը տեսնուին: Պուլկար ապստամպեաներ իրենց ընկերներուն շրջաբերականներ շրջելով կազմ և պատրաստ ըլլալու հրահանգ տուած նն:

— Փեգրսպուրկ 9 փետր. (Պաշտօնական) — «Բէթվիզան» և «Չարեիչ» զրահաւորները ծանրապէս փաստեցան իսկ «Բալլատա» յաժաւորակը ընկղմեցաւ ձաբոնական թօրբիլանաւերէն:

Հոս և ուրիշ քաղաքներ հայրենասիրական ցոյցեր եղան, բայց Բորթ արթուրէ հասած լուրերը ահագին յուզում յառաջ բերին. ժողովուրդը յանկարծակիի եկաւ. երբ պատերազմի յայտարարութենէ առաջ ձաբոնի յարձակման լուրը առաւ, Կայսերական պալատին մէջ տրուելիք պարահանդէսը յետաձգուեցաւ:

Ռուսական զրահաւորներուն վրայ յարձակող ձաբոնական նաւատորմիղը 17 զրահաւորներէ կը բաղկանար:

— ձաբոնի մէջ գտնուող ռուսական հպտտակներուն պաշտպանութիւնը փրանսայի յանձնուեցաւ:

Վաշինկթըն 9 փետր. — Միւսիւ Հվյ (արտաքին գործոց նախարար) տէրութիւններուն շրջաբերական մը զրկեց հարցնելու համար թէ կ'ուզե՞ն հաւաքական ծանուցագիր մը տալ թէ՛ Ռուսիոյ և թէ՛ ձաբոնի, յայտարարելով որ պատերազմի ատեն և անկէ ետքը պէտք է պահուի Չինաստանի չեղօթութիւնը ու ամբողջութիւնը:

Փլիլպեան կղզիները գտնուող ամերիկեան նաւատորմիղէն յաժաւորակ մը զատուեցաւ գընաց ձաբոնի կողմերը, նաւամարտին սկանաւտես ըլլալու համար:

Բորթ արթուր 9 փետր. — Մովսիսը շին մէջ նաւային պատերազմ մը տեղի ունենալով, ռուսական մէկ քանի նաւեր փաստուեցան և երկուք ալ գերի տարուեցան:

Բեգրսպուրկ 9 փետր. (Պաշտօնական)— Երէկ գիշեր ձաբոնական թօրբիլանաւերը փորձեցին Բորթ արթուրի դուրսի ծովախորշին մեր նաւերը օգը հանել, բայց չյաջողեցան. միայն «Բալլատա» յաժաւորակը ընկղմեցին և ուրիշ 2 զրահաւորներու ծանրապէս փաստեցին:

Չարը՝ ծովային սպաներու նուպութեան պատճառաւ բոլոր նաւային ուսանողները դըրօշի տակ կոչելով, հեռեւեալ յայտարարութիւնը ըրաւ.

«Դաւաճան թշնամին մութէն օգտուելով և առանց առաջուց պատերազմ հրատարակելու, յարձակեցաւ մեր նաւատորմիղին ու բերդերուն վրայ»:

ԿՈՎԿԱՍ ԽՈՈՎՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Թալիզի թղթակցէն. — «Թիֆլիզէ և Բօթիէ հասած լուրերուն նայելով, տեղական իշխանութիւնները կարգէ դուրս միջոցներ ձեռք կառնեն սաղմին մէջ խեղդելու համար կողկասի մէջ սարքուած Հայկական ապստամբութեան մը փորձերը: Ոստիկանութիւնը Թիֆլիզ, Պաքու, Պաթում և ուրիշ հայաշատ քաղաքներու մէջ գիշերանց տուներ կը խուկարկէ, պատրուակելով թէ բանտէն փախչողներ կը բնտուէ, մինչդեռ բուն նպասակը հսկել է երիտասարդ հայերուն վրայ որոնք ահագին դաւադրութիւն մը պատրաստած են եղեր կառավարութեան դէմ: Ռուսերն անգամ ամեն կողմէ կը պարսաւեն Պէվէի հայահալած քաղաքականութիւնը: Չինուորական ծառայութիւննին լրացուցած գիւղացիները մէյմէկ յեղափոխական դարձած տեղերնին կը վերադառնան: Տիրող ընդհանուր կարծիքը սա է որ՝ Ռուս կառավարութիւնը շատ գէշ ըրաւ ասանկ տագնապալի ատեն հայերու կրօնական զգացումները վիրաւորելով»:

ՏՕՔԹՕՐԻՆ ՅԱՃԱԽՈՐԴՆԵՐԸ

—Պարոն, գուն անմիտ մըն ես .

—Դուն ալ տխմարին մէկն ես :

Այսօրինակ նախատինքներ կը տեղային իրարու երկու պարոններ, Բարիզի սրճարաններէն մէկուն մէջ . և ցաւալին այն եղաւ որ այս բանակուին յաջորդեցին երկու շառաչածայն ապտակներ, որոնց արձագանգը տասը վայրկեանէն հաղիւ կանհետանայ ականջներէ :

—Պարոն, պէտք է գիտնաք թէ ասանկ նախատինքի մը չեմ կրնար համբերել .

—Նոյնպէս և ես, պարոն .

—Ահաւասիկ այցետոմս .

—Ահաւասիկ իմս ալ :

—Իմ վկաներս վաղն առտու քու տունդ պիտի գան զքեզ գտնեն :

—Այս իրիկուրնէ անոնց պիտի սպասեմ .

Սրճարանին մէջ գտնուողները, որ բանակը թուով սկսող ու կռիւմարտով վերջացող այս վէճին հանդիսատես երամ էին, վերջապէս կը յաջողին վանոնք իրարմէ բաժնել :

Երկու ախոյեանք իրենց այցետոմսերը փոխանակելէ ու մենամարտի որոշումը տալէ ետքը, իւրաքանչիւրն իւր տունը կը մեկնի :

* * *

Մէկ ժամ վերջ, Թրօնչէ փողոցի տան մը գիտնայարկին մէջ կը գտնենք երիտասարդ ու եռանդուն պարոն Աքիլլէս . — Աքիլլէս Հէրակլէսեան, եթէ կուզէք . — որ իր բարեկամներուն հետ կը խորհրդակցէր, բայց անոնց յորդորներուն ականջ չի կախելով, «պիտի մենամարտիմ» կը գոչէր և ուժգին քայլերով սենեակին լայնքն ու երկայնքը կը չափէր :

—Այո, պիտի մենամարտիմ, հազար անգամ կուզեմ մեռնիլ, քան թէ ասանկ նախատինքի մը համբերել .

—Հը, հազար անգամ, ըսաւ բարեկամներէ մէկը . բայց պէտք է գիտնալ որ մարդ մէկ անգամ միայն կը մեռնի :

Պ. Աքիլլէս պարապ տեղը կ'եռար . այս խօսքին ճշմարտութիւն մը ըլլալը կը խոստովանի . քանի որ մարդ միայն մէկ անգամ կր մեռնի, ինչ հարկ կար մենամարտի մը մէջ ինքզինքը սպաննելու վտանգին ենթարկել : Սակայն իր գոռոզութիւնը չի ներքեր որ իր բարեկամաց յորդորներուն շուտով համոզուի . ուստի իւր յախուսն դիրքը պահելով հանդերձ, խօսքին անանկ զարճուածք մը կուտայ որ յայտնի կը ցուցունէ թէ հաշտութեան ճամբէն շատ հեռու չէ :

—Այգ անպիտանը պէտք է ներողութիւն խնդրէ ինձմէ հոնդ իսաւոր կերպով, ապա թէ ոչ . . .

—Խիստ բարի, ըսաւ վկաներէն մին, իր ընկերոջը հետ նշանակալից ակնարկ մը փոխանակելով .

—Վստահ եղիր մեզի, թէ այս գործը պատուաւոր կերպով պիտի կարգադրենք, յարեց միւսը . . . վաղն առաւօտ . . .

—Այո, վաղն առտու կանուխ պիտի երթանք, բայց իւր այցետոմսը տեսնելու ենք :

Պարոնը՝ իր հակառակորդէն առած այցետոմսը խօսակցին սուաւ, որ բարձրաձայն կարգաց .

Տօքթօն Քիւմիշօն, Փիլիսոսի Վալարաւանէն .

Խորհրդակցութիւն առտու ժամը 10էն մինչեւ կես օր .

—Օ, բժիշկ է եղեր . . . լաւ, ուրեմն խորհրդակցութեան ժամուն կերթանք :

—Ու քու պատուոյդ չկատարեալ գոհացում մը պիտի ստանանք .

—Ձեր վրայ կատարեալ վստահութիւն ունիմ, բարեկամներս, ուստի այս գիշերը հանգիստ պիտի կրնամ անցունել :

* * *

Յաջորդ օրը, տօքթօրին տան բակը կը մըտնէին երկու վկաներ, որոնք վերէն վար կոճկուած ու սև զգեստներ հագած էին . Փառաւոր հտգուած սպասաւոր մը գիմաւորեց զիրենք :

—Տօքթօր Փիւմիշօնը հոն է .

—Այո, պարոններ .

Ու երբ երկու վկաները դէպի սանդուղ կը յառաջանային, սպասաւորը ճամբանին կտրելով . — Ներեցէք պարոններ, յարեց, իւրաքանչիւրը 10ական ֆրանք պիտի վճարէք :

—Ի՞նչպէս, տասը ֆրանք . . . բայց մենք ինքզինքնիս նայել տալու համար չեկանք հոս .

—Ձեր այդ առարկութիւնը անօգուտ է . իւրաքանչիւրը 10ական ֆր . պիտի տաք, երկուքիդ համար մէկ նաբօլէօն :

Երկու բարեկամներ տեսնելով որ առանց վճարելու չպիտի կրնան տօքթօրը տեսնել, ու չուզելով պարապ ետ դառնալ, նա մանաւանդ իրենց յանձնուած փափուկ պաշտօնը բախին մէջ կատարելու անկարելիութիւնը գուշակելով, ըստիպուեցան 20 ֆր . համբել .

Սպասաւորը խորին յարգանք մատուցանելով անոնց, թիւ մը կուտայ ու կը հրամցնէ սաւրն մը . ուր արդէն վեց պարոններ՝ ամենքն ալ

մարտը հազուած . ամենքն ալ հաւասարապէս խոժուադէմ . կարգի կապառէին :

—Ձարմանալի չէ՞ . ըսաւ վկաներէն մին իր ընկերոջը . այս բալոր յաճախորդները ռէսէնկօթ հազնող պարոններ են . կ'երեւայ թէ տօքթօր Ֆիւմիչօնը էրիկ մարդոց համար մասնագէտ մըն է :

—Քչմարիա է . պատասխանեց ընկերը . բայց պէտք չէ զարմանալ . քանի որ այնչափ ինքնակոչ բժիշկներ կան կանանց համար .

Այս փսփսուքը կը լսուի ներկայ վեց պարոններէն , որոնք խոժու ակնարկներ կը նետէին նորեկներուն վրայ .

—Ինչ տխուր երևոյթ մը ունի սա տունը . լուսութիւն ու անշարժութիւն պարտաւորիչ է հոս . Կարծես թէ տօքթ . Ֆիւմիչօնի յաճախորդները կանխաւ իրենց թաղմանը ներկայ կը գտնուին .

Եւ յիրաւի , բնաւ աղմուկ մը , ձայն մը , շշուկ մը չէր լսուէր . ժամանակ ժամանակ վարագոյր մը վեր կառնուէր և սալոնին հետ հաղորդակցութիւն ունեցող դուռ մը բացուելով , թիւ մը կը կանչուէր . այն ատեն ամեն մարդ ինքն իր կը նայէր ու երկու պարոններ տօքթօրի տենեակը կը մտնէին , կէս ժամ անցնելէ ետքը ուրիշ թիւ մը կը կանչուի ու երկու պարոններ ալ կաներևութանան . որովհետեւ . զարմանալի բան . տօքթօրին յաճախորդները զոյգ զոյգ կը մտնեն ու կը մեկնին :

Վերջապէս կարգը կուգայ մեր երկու պարոններուն , որոնք տօքթօրին խուցը կը մտնեն ու իրենց գալուն պատճառն ու նպատակը կը պարզեն :

Երկու երեք խօսքով խնդիրը կը կտրագորուի . տօքթ . Ֆիւմիչօն , որ Ֆիլլատէլֆիայի համալսարանէն ելած է , իր գեղեցիկ ձեռքով ու խիստ լաւ կարգացող գրովը կը հաւանի երկու բարեկամաց ուղածէն ալ աւելի ներողութիւն խնդրող գրութիւն մը յանձնել :

Երկու վկաները՝ իրենց պաշտօնին ասանկ յաջող ու խաղաղ ելք մը ունենալուն վրայ խիստ գոհ մնացած՝ կը մեկնին . կարծելով թէ մեծ ծանրութիւն մը վերցած էր իրենց վրայէն . առանց հաշուելու այն քսան ֆրանքներուն ծանրութիւնը զոր տօքթօրին սպասաւորին վճարել ստիպուեր էին :

* * *

Այս միջոցին տօքթօր Ֆիւմիչօն իր սնտուկին հաշիւը նայելով կ'ըզազի . ու կըսէ ինքնիրեն .

—Երէկ իրիկուան հաշուեցոյցը զանազան զբօսարաններու ու սրճարաններու մէջ ութ հատ

առաւել կամ նուազ բուռն վիճարանութիւններ . որոնց հետեանքով այսօր ընդունեցայ 16 վկաներու այցելագիրնը . իւրաքանչիւրը 10ական ֆրանքէն՝ համագումար 160 ֆրանք :

Թարգմ .

Ծ Ի Ծ Ա Ղ

—Մոնաքոյի իշխաններէն մէկը օր մը իր առաջին խորհրդականին կըսէ .

—Որչա՛նի աղէկ բան մը պիտի ըլլար աշխարհ , եթէ մահը չըլլար .

Եւ այս իմաստուն խորհրդականը կը պատասխանէ .

—Տէր իմ , ընդհակառակն աշխարհի աղէկութիւնը մահուամբ է , որովհետեւ եթէ մահը չըլլար՝ դուք հիմա ի՞նչպէս պիտի կարենայիք իշխել :

Ուսուցիչ մը կը հրամայէ աշակերտաց որ իւրաքանչիւրը «ծուլութեան» վրայ մէյմէկ բան գրեն . Ուսանողներէն մին՝ ծուլութիւնը գործնականապէս հասկըցնելու համար՝ ամենեւին չի գրուած՝ պարապ տետրակ մը կը ներկայացնէ ուսուցչին ըսելով . —Միւսիւ , ահա՛ ծուլութեան ի՞նչ ըսել ըլլալը :

Մարդ մը կը հարցնէ բժշկի մը .

—Տօքթօր , թունաւոր սունկը ի՞նչպէս կը ծանցուի .

—Շատ դիւրութեամբ , պէտք է վայն կերցնել զորանչին ու յետոյ սպասել արդիւնքին :

Ցան մը մէջ .

Կինը . —Քա մարդ , սա ի՞նչ է բու բռնած ճամբադ . երէկ իրիկուն նորէն մեխանայէն դուրս ելլալդ տեսեր են :

Էրիկը . —Ի՞նչ պօշ խօսքեր կընես , կսիկ , չելլալս տեսնելնի՞ն կուզես .

—Քա հապա անցած իրիկուն թէօպէ ըրիր քի մէյ մըն ալ չպիտի խմեմ տէյի .

—Է՛յ ի՞նչ ընեմ . օրուան 24 սասթին մէջ թօքը երկու սասթ թէօպէս կաւրեմ կոր . տահա խօսք կընես .

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեծն Բրիտանիա իր չեզոքութիւնը յայտարարեց:

— Օտէսայէն կը գրեն Սթանդարտի թէ Անգլիոյ էտուարտ թագաւորը պիտի այցելէ Ռուսիոյ արքունիքը, յառաջիկայ ապրիլին մէջ:

Լանտրա — Գաղթային նախկին նախարար հռչակաւոր Չէմպրլէն՝ Մարտիլիայէն շոգեճառ նստած է Եգիպտոս երթալու համար:

Բորթ արթիւր 10 փետր. — Շըմէլֆօյի ճակատամարտին մէջ ռուսական երկու զրահաւորներ ալ ընկղմեցան ճարճական թորբիլանաերէն:

Փոքր Թղթասար

Պ. Հրանտ Ալատին ի Գահիրէ. — Վեց ամիս առաժ թերթերնուդ փոխարժէքը՝ 25 դահեկան այլ ևս վճարեցէք:

ՎԱՀԱՆ ՄՈՄՃԵԱՆ

Գահիրէ Ապտինի գարագօլին դէմը, Սփինքս դեղարանին կից, և Շարա Մուհամէտ ալի թըֆէթ — էլ — էնէպա, թիւ 1

Կը պատրաստէ ոսկիէ եւ արծաթէ զարդանկար (միկէյի) եւ դրուագեալ զարդանկեր:

ԳՈՒԻՏՈՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

Նոր Բաղդիբ պատկերազարդ, Ֆրանսահայ երկու հասոր՝ 1874 մեծադիր երեսներով:

Ազգ. — Մատենագիրն փոփաքելով որ իր երկասիրութիւնն մտոյնի եւ օգտակար ըլլայ բոլոր Ազգին, մանաւանդ որ իւր նպատակն է ամենին շշահել, այլ փեսով իսկ վաճառել, որոշած է որ սոյն երկու հատորները ի միասին 25 ֆրանքէն աւելի չարժեն:

Դիմել հեղինակին հետեւեալ հասցեով:

M. G. DE LUSIGNAN

108, Neuilly-sur-Sein. — France

Յանձնարարութիւնը կանխիկ վճարմամբ:

ԶՄԻՌՆԻԱԿԱՆ ՀԱՅ ՆՊԱՐԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Մ. ՊԵՏՐՏԻՄԵԱՆ

Թրիպոնալի ետին՝ հօթէլ սէն ժօրժի կից:

Ամեն սեսակ շառ նպարեղեններէ զատ, Չմիւրնիայէն բերուած շնիւր օղի, գինի, ձէք, կարագ, անաւ, տոփերոյ գոնետրօյաներ, պատրաստ անուշեղեն եւ ոչտրակներ՝ նարինջ, բայ, բարձր շնիւր եւ յում (գրգռիչ). նաեւ Արաշէհիի հանգալին ջուրը որ դժուարամարտութիւնը կը դարմանէ:

Սոյն վաճառատները կը խոստանայ իրեն դիւնոյ յաճախորդները գոնացնել անխարդախ ապրանքներովը եւ գիներն յարաւորութեամբը:

Մեր այս ըսածը հաստատելու համար այցելութիւն մը բարական է:

Մեծախանակ ու փոքրախանակ յանձնարարութիւնք անմիջապէս կը կատարուին: 8

ՏՕՔԻՕՐ ՓԱՇԱՅԵԱՆ ԽԱՆ

Խորհրդակալ Բժիշկ Պարսից թագաժառանգ Իշխանին

Այս անգամ Աղեթսանըրիս հաստատուած չէ՞նք, պատիւ ունի յայտնելու յարգելի Հայ հասարակութեան, որ ամեն օր առաւօտները ժամը 9-էն 12 եւ երեկոյները 3-էն 5 հիւանդներ կընդունի իր սան մէջ, Աթթարին փողոց թիւ 31, Մզկիթին դէմը, երկրորդ յարկ:

Ներքին եւ փոքրածական հիւանդութիւններու հետ, կը դարմանէ նաեւ երախաներու հիւանդութիւնները, 15 արոյն մասնագիտական փորձառութեամբ:

Յաջող կերպով կը դարմանէ նաեւ Աճիօնաճորտութիւնը եւ Մորժիւնաճորտութիւնը, որոնց դէմ հնարած է մասնաւոր դեղ մը եւ որուն շնորհիւ Պարսկաստանի մէջ հազարաւորներ անվնաս քողած են այդ մոլորութիւնը: 11

Տ Պ Ա Ր Ա Ն

ՀԱՅԵԼԻ

«Հայեցի»ի սպարանին մէջ դիրամտացելի գնով կը սպարուին առեւտրական տներու համար ամեն յեղուէ՝ Բարիգեան վերջին դրոքեամբ հետաքրքրաւոր, պատկերազարդ եւ գունաւոր փոքրիկ ազդարարութիւններ. կը սպարուին նաեւ այցելոսնս, հասցէտուն, հարսանեկան հրատրագիր մահազդ, նամակագրութիւն, պահարան, տոմար, եւն. Ուրիշ ֆաղափներէ եղած յանձնարարութիւնք ալ փոքրով կը կատարուին: